N 41
«18» փետրվարի 2015թ

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Կոտայքի մարզի «Զովունի» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «**ԶՄ-15/1-ՇՀԱՊՁԲ-11/2**»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Կոտայքի մարզի «Զովունի» մանկապարտեզ ՀՈԱԿ, գ.Զովունի հասցեով, մինչև 2015թ. մարտի 2-ը, ժամը 10:30-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Է.Գրիգորյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ՀՀ Կոտայքի մարզի «Զովունի» մանկապարտեզ ՀՈԱԿ, գ.Զովունի հասցեում, 2015թ. մարտի 2-ին, ժամը 10:30-ին:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ Կոտայքի մարզի «Զովունի» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ Սննդամթերքի ձեռքբերումը:

ՀՀ Կոտայքի մարզի «Զովունի» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի -ի կարիքների համար՝ Սննդամթերքի մատակարարման (որոնք կազմված են՝ 54 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը ներկայացված են կից ներկայացված պայմանագրի նախագծի N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակիցները հայտով ներկայացնում են նաև իրենց կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական նկարագրերը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ Կոտայքի մարզի «Զովունի» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ info@egprocurement.am :

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

ՀՀ Կոտայքի մարզի «Զովունի»
մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն Ս.Թորոսյան

Կ.Տ.

Հավելված 5
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N *ՁՄ-15/1-ՇՀԱՊՁԲ-11/2* ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____-ի կողմից N **ՁՄ-15/1-ՇՀԱՊՁԲ-11/2** ծածկագրով
Պատվիրատուի անվանումը

հայտարարված ընթացակարգի _____ չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«_____» _____ 20___թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N *ՀՄ-15/1-ՇՀԱՊՁԲ-11/2* ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N **ՀՄ-15/1-ՇՀԱՊՁԲ-11/2** ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Պայմանագրի կատարման գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
…	…			
…	…			

3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:

Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«_____» _____ 20____թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 8
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N

ք. Գյումրի «_____» _____ 20___թ.

_____, ի դեմս Ընկերության տնօրեն՝
Մասնակցի անվանումը
_____, որը գործում է Ընկերության կանոնադրության
Ընկերության տնօրենի անուն ազգանունը
հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է _____
Պատվիրատուի անվանումը
(այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ Սննդամթերքի ձեռքբերման **ԶՄ-15/1-ՇՀԱՊՁԲ-11/2** ծածկագրով ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի ապահովում և ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված Սննդամթերքի ձեռքբերման **ԶՄ-15/1-ՇՀԱՊՁԲ-11/2** գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ----------թվերով---------- (----------տառերով----------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «Մասնակցի բանկի անվանումը» կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «Մասնակցի անվանումը», հանձնարարում է «Մասնակցի բանկի անվանումը»-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Պատվիրատուի անվանումը» առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20___թ. _____-ի _____-ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

_____,
Մասնակցի անվանումը (անունը)

_____,
(հասցեն)

_____,
(բանկ)

Հ/Հ _____

ՀՎՀՀ _____

_____,
(Մասնակցի ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանուն)

_____,
(ստորագրություն)

_____,
(Մասնակցի գլխավոր հաշվապահի (հաշվապահի), անուն, ազգանուն)

_____,
(ստորագրություն)

Կ.Տ.

Նախագիծ

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՁՄ-15/1-ՇՀԱՊՁԲ-11/2.....

գ. Մխչյան « » _____ 2014թ.

ՀՀ Կոտայք մարզի «Զովունի» մանկապարտեզ ՀՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն Ս.Թորոսյանի, ով գործում է ՀՀ Կոտայք մարզի «Զովունի» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, /այսուհետև՝ «Գնորդ»/, մի կողմից, և «_____» -ն, ի դեմս տնօրեն _____յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, /այսուհետև՝ «Վաճառող»/ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 1) Գնորդին մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված Սննդամթերք /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում վճարել դրա համար:

1.2 Ապրանքը մատակարարվում է է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր, գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին՝ ՀՀ Կոտայք մարզի «Զովունի» մանկապարտեզ ՀՈԱԿ, գ.Զովունի հասցեով:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն Պայմանագրի N 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում՝ որը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 **Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.6 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները).

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ հանդիսացող անձի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

3) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ: Պատվիրատուն իր համաձայնությունը տալու համար իրավունք ունի մասնակցից պահանջելու նոր գործակալի կամ ենթակապալառուի վերաբերյալ փաստաթղթեր՝ վերջինիս համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը ճշտելու նպատակով: Պատվիրատուի անհամաձայնության դեպքում վերջինս երկու աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է մասնակցին և գործակալի կամ ենթակապալառուի փոփոխություն չի կատարվում, կամ պայմանագիրը լուծվում է.

4) մասնակիցն է պատասխանատվություն կրում գործակալի կամ ենթակապալառուի պարտավորությունների համար:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին հանձնել Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Առանձին փուլում թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, հաջորդ փուլում (փուլերում) լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 2) :

6.2 Արձանագրություն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ինչպես նաև ներկայացվում է սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված փաստաթղթերը: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) Հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 30.12.2015թ.:

Մինչև պայմանագրի գործողության ավարտը սահմանված քանակի Ապրանքները ամբողջությամբ չմատակարարվելու դեպքում, եթե այդ հանգամանքը Մասնակցի գործողությունների կամ անգործության հետևանք չէ, ֆինանսական հատկացումների նվազեցման հիմքով պայմանագիրը համարվում է մասնակի լուծված՝ չմատակարարված ապրանքների մասով:

9.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի. Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.4 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.6 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.7 Պայմանագիրը և հավելվածները կազմված են ____ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.8 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
---	---
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
«.....» ..... 2....թ. կնքված
N **ԶՄ-15/1-ՇՀԱՊՁԲ-11/2** պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առարկայի տեխնիկական և այլ բնութագրիչ տվյալները
1	Հաց, բարձր տեսակի	կգ	1800	Ցորենի ալյուրից թողարկված հատով, պատրաստված բարձր տեսակի ալյուրից: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
2	Ալյուր բարձր որակի	կգ	50	Բարձր տեսակի, փայլուն սպիտակ գույնի, առանց ավելորդ խառնուրդների և հոտի, փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
3	Մակարոն, վերմիշել	կգ	300	Մակարոնեղեն անդրոժ խմորից, չափածրարված: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
4	Շաքարավազ	կգ	260	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված): ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
5	Կարագ	կգ	70	Սերուցքային, 71.5-82.5% յուղայնությամբ, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գր, ածխաջուր 0,7գր, ԳՕՍՏ 37-91, 740 կկալ, 20-25 կգ գործարանային փաթեթներով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
6	Բուսական յուղ Չեթ արևածաղկի	լիտր	60	Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված , փաթեթավորումը՝ շշալցված մինչև 3լիտր տարողություններում: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
7	Բրինձ	կգ	130	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:

8	Հնդկաձավար (գրեչկա)	կգ	70	Հնդկաձավար I տեսակի, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 % ոչ պակաս, գործարանային պարկերով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
9	Ոսպ	կգ	40	Մաքուր, չոր՝ խոնավությունը 14 %-ից ոչ ավելի, միջին չորությունը՝ 14,0-17,0 % ոչ ավելի: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
10	Ոլոռ	կգ	40	Չորացրած, կեղևած, դեղին գույնի: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
11	Ձավար	կգ	60	Պատրաստված ցորենի ծեծած տեսակից, սպիտակ և թեփահան եղած: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
12	Հաճար	կգ	40	Ստացված հաճարի հատիկներից, հատիկների խոնավությունը 15%-ից ոչ ավելի, փաթեթավորումը տոպրակներով կամ պարկերով: Անվտանգությունը ըստ N2- III-4,9-01-2010 հիգենիկ նորմատիվների և ,,Սննդամթերքի անվտանգության մանին,, ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
13	Տոմատի մածուկ	կգ	50	Բարձր տեսակի ապակե տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարողությամբ, ապակե տարաներով: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
14	Ձու	հատ	1300	1-ին կարգի, Ձու սեղանի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, սեղանի ձվի պահման ժամկետը 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
15	ՄԻՍ	կգ	80	Միս տավարի թարմ, առանց ոսկորի մսեղիք, զարգացած մկաններով, պահված 6 ժ-ից ոչ ավելի: Պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, պահված 0-40C ջերմաստիճանի պայմաններում, I պարարտության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
16	Հավի միս	կգ	45	Հավի մսեղիք առանց սառեցրած վիճակի, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:

17	Հավի կրծքամիս	կգ	20	Առանց սառեցրած վիճակի, մաքուր արյունազրկված, առանց կողմնակի հոտերի: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
18	Պանիր	կգ	85	Պանիր կովի կաթից, յուղի զանգվածային մասը 50 %-ից ոչ պակաս, աղի զանգվածային մասը 3,5-4,5 %: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
19	Մածուն	կգ	500	Մածուն 3,2 % յուղայնությամբ, թթվայնությունը 110-140 oT, չափածրարվածպլաստմասսե 220 գ. տարաներում: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
20	Թթվասեր	կգ	140	Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20%-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 T: Գործարանային արտադրությամբ և փաթեթավորմամբ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
21	Կաթնաշոռ	կգ	140	Կաթնաշոռ թթվայնությունը՝ 210-240 T, փաթեթավորված սպառողական տարաներով մինչև 100 գ կշռաբաժիններով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
22	Խտացրած կաթ	հատ	25	Խտացրած կաթ շաքարով, խոնավությունը՝ 26,5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43,5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 8 0T-ից ոչ ավելի, փաթեթավորումը՝ չափածրարված մինչև 400գ մետաղական տարաներում: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
23	Թխվածքաբլիթ	կգ	100	Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված, խոնավությունը՝ 3%-ից մինչև 10%, շաքարի զանգվածային պարունակությունը՝ 20%-ից մինչև 27%, յուղայնությունը՝ 3%-ից մինչև 30%: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
24	Գաթա	կգ	100	մածնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված, խոնավությունը՝ 3%-ից մինչև 10%, շաքարի զանգվածային պարունակությունը՝ 20%-ից մինչև 40%, յուղայնությունը՝ 3%-ից մինչև 30%: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
25	Խաչապուրի	հատ	1000	Կաթնահունց, երկարատև պատրաստված, խոնավությունը՝ 3%-ից մինչև 20%, պանրի զանգվածային պարունակությունը՝ 20%-ից մինչև 32%, յուղայնությունը՝ 3%-ից մինչև 30%: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:

26	Կոնֆետ-Կարամել	կգ	40	Թարմ, մրգային, տեղական արտադրության 2 տեսակի՝ նաբաթով և միջուկով, խոնավությունը՝ 3.0% ից ոչ ավելի, թթվայնությունը՝ - 3-26: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
27	Թեյ	հատ	60	սև, տերևներով, գործարանային փաթեթավորմամբ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
28	Աղ, կերակրի մանր	հատ	25	էքստրա տեսակի յոդացված, յոդի զանգվածային մասը՝ 50°10 մգ/կգ: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
29	Կաղամբ	կգ	260	Գլուխ կաղամբ, առանց արտաքին վնասվածքների, չցրտահարված, սովորական տեսակների: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
30	Կարտոֆիլ	կգ	500	I տեսակի, չցրտահարված, առանց արտաքին վնասվածքների, նեղ մասի տրամագիծը 4 սմ-ից ոչ պակաս, տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ կտորի, ցացնի և պոլիմերային պարկերով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
31	Վարունգ	կգ	80	Թարմ, առանց վնասվածքների և տեղական արտադրության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
32	Կանաչի	կգ	50	Թարմ և չորացրած, առանց վնասվածքների և տեղական արտադրության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
33	Գազար	կգ	30	Սովորական տեսակի, առանց արտաքին վնասվածքների, վաղահաս, միջին երկարությունը 10-15 սմ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
34	Բազուկ	կգ	30	Սովորական տեսակի, առանց արտաքին վնասվածքների, վաղահաս, միջին երկարությունը 5-7 սմ, լայնքը՝ 10-12 սմ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:

35	Սոխ	կգ	50	Ընտիր տեսակի, թարմ, կիսակծու, նեղ մասի տրամագիծը 3սմ-ից ոչ պակաս: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
36	Չամիչ	կգ	4	Գործարանային մշակման չոր մրգեր առանց կորիզի, չափածրարված, պահպանված 5 C-ից մինչև 20 C ջերմաստիճանում 70 %-ից ոչ ավելի խոնավության պայմաններում: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
37	Խնձոր	կգ	50	Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս: Առանց վնասվածքների, թարմ և ախորժելի սեսքով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
38	ծիրան	կգ	50	Թարմ ,միջին չափսերի, առանց արտաքին վնացվածքների, տեղական արտադրության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
39	մանդարին	կգ	40	Թարմ ,միջին չափսերի, առանց արտաքին վնացվածքների, ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
40	նարինջ	կգ	40	Թարմ ,միջին չափսերի, առանց արտաքին վնացվածքների, ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
41	բանան	կգ	50	Թարմ ,միջին չափսերի, առանց արտաքին վնացվածքների, տեղական արտադրության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
42	դեղձ	կգ	50	Թարմ ,միջին չափսերի, առանց արտաքին վնացվածքների, տեղական արտադրության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
43	խաղող	կգ	50	Թարմ ,միջին չափսերի, առանց արտաքին վնացվածքների, տեղական արտադրության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
44	Կաթ	l	500	Կաթ 3,2 % յուղայնությամբ, չափածրարված պլաստմասսե 1l տարաներում: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
45	քաղցրաշոռիկ	հատ	600	1-3.2% յուղայնությամբ, չափածրարված պլաստմասսե տարաներում: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
46	զեյթունի պահածո	հատ	60	փաթեթավորված 0.5l տարաններում, ՀՀ նորմերին համապատասխան
47	մրգահյութ	l	150	տեղական արտադրության, չափածրված, փաթեթավորված 1l. տարաներում, ՀՀ նորմերին համապատասխան
48	ոլոռի պահածո	հատ	30	փաթեթավորված 0.5l տարաններում, ՀՀ նորմերին համապատասխան

49	դդմիկ	կգ	25	տեղական արտադրության, միջին չափսերիր
50	բադրջան	կգ	500	տեղական արտադրության, միջին չափսերիր
51	լոլիկ	կգ	50	տեղական արտադրության, միջին չափսերիր
52	սև և կարմի պղպեղ աղացած	կգ	7	չափածրված թղթյա տարաներում,
53	սոդա	հատ	30	չափածրված թղթյա տարաներում, ՀՀ նորմերին համապատասխան
54	մսի պահածո	կգ	80	0.5 կգ տարաներում, ՀՀ նորմերին համապատասխան

Վճարման ժամկետը, **վճարման ժամանակացույց**	Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում, յուրաքանչյուր ամսվա մինչև 15-րդ բանկային օրը, նախորդ ամսվա ընթացքում փաստացի մատակարարված ապրանքների 100%-ի չափով՝ Կատարողի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և ընդունման-հանձնման արձանագրությունների հիման վրա:
Մատակարարման ժամկետը և վայրը /**գնման ժամանակացույց**/	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 աշխատանքային օրվանից հետո /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/ յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացում: Ապրանքների տեղափոխումը իրականացնում է մատակարարը, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզի '"Զովունի " մանկապարտեզ ՀՈԱԿ, գ.Զովունի հասցեով

ԳՆՈՐԴ **ՎԱՃԱՌՈՂ**

---------- ----------

ստորագրություն ստորագրություն

Կ.Տ Կ.Տ

Հավելված 2
«____» _____ 2____թ. կնքված
N ԶՄ-15/1-ՇՀԱՊԶԲ-11/2 պայմանագրի

Վաճառող	Գնորդ
_____	_____
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը_____	գտնվելու վայրը_____
ՀՀ_____	ՀՀ_____
_____	_____
ՀՎՀՀ_____	ՀՎՀՀ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» _____ 20____թ.
Պայմանագրի անվանումը՝ «_____»:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» _____ 20____թ
Պայմանագրի համարը՝ _____
Գնորդը, ի դեմս _____ և Վաճառողը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ մատակարարումները) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «____» _____ 20____թ.-ից «____» _____ 20____թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Մատակարա-ումների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Մատակարարումը հանձնեց	Մատակարարումները ընդունեց
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)